# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 6 | <<Դիմաքս քլոր հաբեր 2,7 գ>>, 1 կգ-անոց տուփում 370 հատ: Որպես ազդող նյութ պարունակում է դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ: 1 հաբը անջատում է 1,5 գ ակտիվ քլոր, 10 լ ջրում լուծելիս ստացվում է 0,015 %-անոց կոնցենտրացիայի ակտիվ քլոր պարունակող աշխատանքային լուծույթ, որն օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական բակտերիաների նկատմամբ (այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների, թեստավորված Միկոբակտերիում տեռռայի նկատմամբ), ներհիվանդանոցային վարակների (այսուհետ՝ ՆՀՎ) և հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, տուլյարեմիա, խոլերա, լեգիոնելոզ, սիբիրյան խոց, այդ թվում՝ սպորներ), կանդիդա տեսակի սնկերի և դերմատոֆիտների, վիրուսների (այդ թվում՝ պոլիոմիելիտի, արտաընդերային հեպատիտների, մարդու իմունային անբավարարության վիրուսի (այսուհետ՝ ՄԻԱՎ), ադենովիրուսի): Նախատեսված է մակերեսների, կոշտ գույքի, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդների խնամքի պարագաների, չժանգոտվող մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակե բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման համար, ունի հակավիրուսային, հակասնկային, հակաբակտերիալ, հակատուբերկուլյոզային ազդեցություն: Հաբերի պիտանելիության ժամկետը փակ տարայում՝ 5 տարի: Բացված պատրաստի լուծույթը պիտանի է 5 օր: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 18 մայիսի 2016թ., թիվ 1551-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 6 | |